ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 հոկտեմբերի 2020 թվականի N 234 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 27-Ի N 127-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով.

ո ր ո շ ու մ ե մ.

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2020 թվականի մայիսի 27-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի համակարգի հարյուր տոկոս պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական փակ բաժնետիրական ընկերությունների 2020 թվականի եկամուտների և ծախսերի նախահաշիվները հաստատելու մասին» N 127-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝ որոշման NN 1, 2, 4 և 5 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն NN 1, 2, 3 և 4 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և տարածվում է 2020 թվականի սեպտեմբերի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Հ. ՊՈՂՈՍՅԱՆ

2020թ. հոկտեմբերի 06
ք. Կապան